

# ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ ԹՂԹԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Փարպեցու թղթագրական ժառանգությունը հայ միջնադարյան գրականության մեջ մեծ կարևորություն ունի ինչպես բանասիրական, այնպես էլ մեթոդական առումով: Բացի նրա հանրահայտ «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» կամ «Ստախոս արեղաների մեղադրությունը» երկից, մեզ են հասել նաև «Հայոց պատմության» 2-րդ դրվագի երկու թղթերը՝ Հագկերտի հրովարտակը և Արտաշատի ժողովի պատասխան նամակը, որոնք թեև գիտական լուրջ հետաքրքրություն են ներկայացնում, սակայն խիստ խնդրահարույց են պատճենում կամ հեղինակային հորինվածք լինելու տեսակետից<sup>1</sup>, և հարցը դեռևս լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի: Ինչ վերաբերում է Վահանին ուղղված թղթին, ապա այն գլուխգործոցային ստեղծագործություն է, հռետորական հղացում<sup>2</sup>, որը շատ բարձր է գնահատվել մեր մեծերի կողմից (խոսքն առաջին հրատարակիչ Սկ. Էմինի<sup>3</sup> ու առաջին թարգմանիչ և ուսումնասիրող Միք. Նալբանդյանի<sup>4</sup> մասին է): Թղթի գրության ժամանակը համարվում է մոտավորապես 488-491 թթ. միջակայքը<sup>5</sup>:

Հակառակ գոյություն ունեցող այն պատկերացմանը, թե հումանիտար գիտությունները մեթոդի խնդրում ճգնաժամ են ապրում և զգալիորեն կախված են մնում բնագիտության մեջ մեծ տարածում գտած ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդներից<sup>6</sup>, պետք է նկատենք, որ դա այնքան էլ ճիշտ չէ, քանզի հումանիտար գիտությունների ուսումնասիրության ոլորտում կուտակված է մի քանի հազարամյակների փորձ: Գեղագիտության ոլորտում ևս կան «այնպիսի կատեգորիաներ, որոնց ամբողջ իմաստը հենց նրանց ընդհանուր նշանակության մեջ է»<sup>7</sup>: Այնպես որ, այդ բնագավառում

<sup>1</sup> Տե՛ս Ա. Ալեքսանյան, Հայ միջնադարյան նամակը (4-14 դդ.), Եր., 1997, էջ 6-7, 20, 38-39:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 58-59:

<sup>3</sup> Տե՛ս Սկ. Էմին, Ղազար Փարպեցույ Թուղթ առ Վահան Տեր Մամիկոնեից, Մոսկուայ, 1853, էջ 9:

<sup>4</sup> Տե՛ս Միք. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Եր., 1940, էջ 255-261: Այս մասին տե՛ս նաև Մայ. Ավդալբեգյան, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Եր., 2009, էջ 160-167:

<sup>5</sup> Տե՛ս Գր. Խալաթեանց, Ղազար Փարպեցի եւ գործք նորին, Մոսկուայ, 1883, էջ 47-49, նաև՝ Մաղ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Եր., 2001, էջ 560:

<sup>6</sup> Տե՛ս Галагер X. - Г. История и метод. М., 1988, էջ 39-43, նաև՝ «Новейший философский словарь». М., 1988, էջ 420 (Метод):

<sup>7</sup> Էդ. Ջրբաշյան, Պոետիկայի հարցեր, Եր., 1976, էջ 86:

բնավ էլ քառու չի տիրում, այլ օգտագործվում են տարածված գեղագիտական օրինաչափություններ և ուսումնասիրության եղանակներ: Գոյություն ունեն ինչպես ավանդական<sup>8</sup>, այնպես էլ արդիական մեթոդներ<sup>9</sup>, որոնք հնարավորություն են տալիս այս ասպարեզում առաջ շարժվել: Մեծ կարևորություն ունեն նաև այս կամ այն գիտության ուսումնասիրության ուղորտում կուտակված փորձի արդյունքները, որոնք ևս տվյալ գիտաճյուղի համար կարևոր նշանակություն ունեն<sup>10</sup>: Ճշմարտության որոնման և բացահայտման ճանապարհին, այն է՝ փիլիսոփայական մեթոդներից դեպի գեղագիտականը գնալիս ծագում են դպրոցների կամ գրական ուղղությունների, սեռաժանրային առանձնահատկությունների, տաղաչափական ձևերի ընտրության, ոճի հարցերը (ինչպես ընդհանրական, այնպես էլ հեղինակային-անհատական), և երկաստեղծման մեթոդի կամ համակարգի ըմբռնումն ընդլայնվում է ու բարդանում<sup>11</sup>:

Թղթի ուսումնասիրությունը մենք ցանկանում ենք կատարել կառուցվածքաբանական մեթոդի որոշակի գործադրմամբ: Այս մեթոդի հետևորդները հակված են երկի կառուցվածքային տարրերը կարևորելու, որոնցում հաճախ դրսևորվում են առավել ընդհանրական օրինաչափություններ: Նրանց կարծիքով ինֆորմացիան փոխանցվում է տեքստի կողերի շնորհիվ<sup>12</sup>: Հակադրության կողմերի սահմանահատումն անհրաժեշտություն է, բայց հենց այդտեղ էլ պիտի լուծվի ներհակությունը: Մյուս՝ այսպես կոչված չեզոք մասերում պահպանվում է բուն տեղեկատվությունը<sup>13</sup>: Փաստորեն երկի ուսումնասիրությունը ինֆորմացիայի բացահայտումն է՝ համապատասխան կողերի մեկնաբանության ճանապարհով: Սա մեթոդական այն մոտեցումներից մեկն է, որ առավել արդյունավետ է դարձնում Վահան Մամիկոնեանին ուղղված թղթի նորովի ուսումնասիրությունը: Նախ դրվում է **սրբազանի և պրոֆանայինի** (եղծվածի), **հոգևորի ու աշխարհիկի** գիտակցման հարցը, այսինքն՝ երկնային աստվածաշնորհյալի և երկրային աղճատվածի: Դա դրսևորվում է «վերև» և «ներքև» հակադրության ձևով: Անձնավորված են՝ վերևը՝ Վահան Մամիկոնյանով, ներքևը՝ իրենով: Այսպես. «Արդ **դու, տեր, այր քաղցր ես և խոնարհամիտ և արդարահայեաց...եվ ես անպիտանս...իրբև անզգամ**»<sup>14</sup> (ընդգծումը մերն է - Ս. Մ.): Այս տարբերությունը պայմանավորված է դասային հակադրությամբ և հասարակական սանդղակում նրանցից յուրաքանչյուրի գրաված դիրքով: Դա հակադրության ուղղահայացն է, ու թեպետ Մ. Աբեղյանն այս առիթով նկատում է, որ նվաստացնելով իրեն՝ նա միայն թելադրում է Վահանին ու-

<sup>8</sup> Այս հարցում մենք նախ նկատի ունենք հերմենևտիկ մեթոդը, որն ուսումնասիրում է տվյալ անհատի, ժողովրդի, պետության առանձնահատկությունները, ստեղծված վիճակն ու պատճառներն այդ ամենի մեջ (տես **Галамер X.- Г.**, նշվ. աշխ., էջ 44-46):

<sup>9</sup> Տես **Лотман Ю.** Культура и взрыв. М., 1992, էջ 7-12: Այստեղ նկատի ունենք կառուցվածքաբանական մեթոդի առանձնահատկությունները, որի հետևորդները կարևորում են տեքստի կառուցվածքային տարրերը:

<sup>10</sup> Տես **Лотман Ю.** Структура художественного текста. М., 1970, էջ 11-12:

<sup>11</sup> Տես **Եղ. Ջրբաշյան, Պոետիկայի հարցեր**, էջ 81-90:

<sup>12</sup> Տես **Лотман Ю.**, Структура художественного текста. էջ 11-12:

<sup>13</sup> Տես **Лотман Ю.** Культура и взрыв, էջ 12-18:

<sup>14</sup> **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն: Թուղթ Վահան Մամիկոնյանին, Եր., 1982, էջ 450:

շաղիր լինել իր հանդեպ ու իր արժանապատվությունը չի կորցնում<sup>15</sup>, բայց սեփական անպաշտպան վիճակը, վտանգավոր հարձակումն իր դեմ իրականում նրան այդ հնարավորությունից զրկում են:

Մյուս հակադրությունը «մերոնք» և «այլք» հորիզոնական հարթությունում է: Այս դեպքում գրում է. «Եւ ես եմ այն Ղազար, ըստ առ ի քէն տեառնէ և այլոց բազմաց ասացածի, որում ոչ ոք գոյ փոխանակ»<sup>16</sup>: Հակադրության բուն պատճառը համարվում է **Մախանձը**, որը բանսարկուի պատճառով մտավ աշխարհ: Նամակի «գործողությունների» հատման այս երկու կետերի շուրջ են պտտվում իրադարձությունները: Լայն առումով հորիզոնական հարթության մեջ առաջադրվում են նաև բարու և չարի պայքարի խնդիրները: «Վերև» և «ներքև» հակադրությունը, ինչպես նշվեց, այստեղ դեռևս բնորոշվում է ըստ սոցիալական աստիճանակարգի: Հեղինակային մոտեցումը դա է հուշում. Վահանին դիմում է «տէր» ձևով ու զգուշավոր դրական բնութագրումներով՝ **քաղցր, խոնարհամիտ, արդարահայաց և կշռաքնին** բառերի գործածումով: Գր. Խալաթանցը այս առթիվ նկատում է, թե թղթագրի ճարտասանությանը դիմելու պատճառն այն է, որ նա վտանգավոր աղանդավոր էր համարված, ուստի մարզպանը կարող էր նրա նամակն ուշադրության իսկ չարժանացնել<sup>17</sup>: Գուցե հավատի մեջ ինքը թերացել է, նշում է Ղազարը, սակայն գործով բնավ այդպիսին չէ: Դրա համար բերում է Պողոս առաքյալի օրինակը՝<sup>18</sup> ցույց տալու, որ խոսելու է իր գործերի մասին՝ դա բնավ չցանկանալով, դրա իրավունքն իսկ չունենալով, այլ հարկադրանքից դրդված: Այսպես. «Թեպետ և երկիցեմ առաջի տեառն...., իբրև անզգամ, որպէս մեծ առաքեալն Պողոս՝ այլ քո տեառն, քրիստոսանմանութեամբ տարեալ, ներելով անզգամութիւնս իմում՝ ընկալ՛ գիս իբրև անզգամ»<sup>19</sup>: Խնդրում է ընդունել իրեն: Արտատեքստային մասում դեռևս թողնելով իրենց մանկության և մտերմության հանգամանքը, որի մասին Վահանը լավ գիտի, նախ խոսքն ուղղում է սրբազան գործերի ու նպատակների հանգամանքները շեշտելուն, Սյունիք մեկնելուն և «աշխարհական շփոթից» իրեն դուրս դնելուն: Եթե պատկերացնենք, որ Ղազարի դեմ հարուցված հալածանքները հետևանք են Բաբկեն կաթողիկոսի և իր արբանյակների մեքենայությունների, ինչպես ենթադրում է Մ. Օրմանյանը, ապա նա կարիք ուներ որոշ ժամանակ հեռու լինելու բախումների կիզակետից: Դրա հետ մեկտեղ՝ նա իրականում հունաճաշակ անձնավորություն է և միևնույն ժամանակ կաթողիկոսական Աթոռի ամենալուրջ հավակնորդներից մեկը: Ուրեմն առկա հակադրությունը միայն անձնական դրդապատճառներից չի ծագում, այլ նաև ունի քաղաքական ենթատեքստ: Եվ Ղազարի նշած շփոթությունն ավելի լայն բովանդակություն ունի տեքստից դուրս, քան այնտեղ պատկերվում է: Սա է այն նպակադրումներից մեկը փաստական առումով, որ հնարավորություն է տալիս հռետորին՝ բացելու իր լեզվի կապանքները և խոսելու հալածյալների ու իրենց ոտնահարված իրավունքների մասին: «Եւ երթեալ ի Սիւ-

<sup>15</sup> Տե՛ս Մ. Աբեդյան, Երկեր, հ. 9, Եր., 1968, էջ 348:

<sup>16</sup> Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն: Թուրք Վահան Մամիկոնյանին, էջ 452:

<sup>17</sup> Տե՛ս Գր. Խալաթանց, Փարպեցի եւ գործք նորին, էջ 36-37:

<sup>18</sup> Տե՛ս Աստվածաշունչ, Գործք ԳՁ-ԻԸ, նաև՝ Ա. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 63:

<sup>19</sup> Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն: Թուրք Վահան Մամիկոնյանին, էջ 450:

նիս՝ կեցի անդ ամս երկուս, զձմեռն ի քարայրի, առ առն միում՝ հռչակելոյ ի բնակչաց գաւառին յամենայն կրօնաւորութիւնս, որում անուն էր Մովսէս»<sup>20</sup>, - գրում է նա: Այս գեղեցիկ ու նշանակալից մտերմութիւնը հաստատելուց հետո միայն անցնում է իր և Վահանի մտերմութեան հարցին: Ներսէս և Յրահատ Կամսարականները և Սյունյաց աշխարհի եպիսկոպոս տեր Մուշէն լավ գիտեն այնտեղ ապրած ժամանակվա իր կյանքն ու վարքութեանը: Ցանկանում է շեշտել, որ մինչև Վահանի՝ իրեն փնտրել-գտնելն ինքը չի մեղանշել հավատքի դեմ և այդ անձանց ունի իբրև վկա: Ավելին՝ իր՝ Սյունիք գնալը ավելի շատ աղոթքով զբաղվելու, աշխարհական հոգսերից իրեն ազատելու համար էր, ինչպէս ինքն է նշում, և բացառված չէ նաև՝ թելադրված կաթողիկոսից ու պաշտոնական հոգևոր վերնախավից ժամանակավորապէս հեռու գտնվելու անհրաժեշտությամբ:

Իրերի ընդհանուր վիճակը նկարագրելուց հետո անդրադառնում է իրենց ուսուցչի՝ մարզպանի մորեղբայր Աղան Արծրունու և նրա աշակերտների հետ ունեցած մտերմութեան փաստին: Նա էր, «որ զատոյցն զիս պարեգոտիւք ի ծառայութենէ աշխարհիս, և ազատութեան եղև մեզ առիթ»<sup>21</sup>: Այդ ազատութեան մեջ նա իրեն լիովին նվիրել է Քրիստոսի սիրուն, որով կրկին հեղինակն ընդգծում է վերև-ներքև ուղղահայացը: Կատարվում է նախնայաց հիշատակների իսկական իմաստով վկայակոչում: Դա նույն արքեպիսկոպոսն է, որ իրեն զգալ է տալիս և այստեղ: Ղազարը հիշում է Վարդանի եղբայր Յմայակի կնոջը՝ Չվիկին՝ նրա անունը թղթում չհիշատակելով: Իր «Պատմութիւն Յայոց»-ից իմանում ենք, թե ինչպէս նա չորս որդիների հետ տեղափոխվում է Վիրք՝ իր քույր Անուշվուռի տուն՝ Աշուշայի ընտանիք՝ այնտեղ դաստիարակելու նրանց: Այդ ժամանակ իրենք, այսինքն՝ Վիրքում գտնվողները, Վահանից ու նրա եղբայրներից մեծ էին, բայց «սննդակիցք էաք ձեզ և խաղակիցք»<sup>22</sup>: Ղազարի այնտեղ գտնվելը պատահական չէր, քանզի նա էլ, ամենայն հավանականությամբ, ազնվականական ծագում է ունեցել<sup>23</sup>, լինելով Կամսարականների կամ Մամիկոնյանների ազգակիցը: Այստեղ էլ նրանք մտերմացել են, ու վերջինս խնամել է Վահանին: Իսկ սա ավելի ուշ, «օգնությամբն Աստծո», դարձել է ամենաքաջը հայոց մեջ, քանզի վերին խնամակալությունը պայծառեցրել է նրա մեծությունը, իսկ իրեն պարգևել է ավելի շատ շնորհներ, քան մյուս պարեգոտավորներին:

Վահան - Ղազար հակադրության մեջ Ղազարը ներքևում է: Այս հակադրության մի ծայրն էլ առնչվում է մյուս ուղղահայացին՝ կաթողիկոս - Ղազար: Գր. Խալաթեանցը գրում է, որ հայոց քահանայապետը չի իսկ ցանկացել լսել նրան, չի ընդունել, մինչդեռ թղթագիրը տալիս է «աջող օրինակք, փայլուն հակադրութիւնք...առ ի կշտամբել աներկիւղաբար

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 452: 7-րդ դարում ապրած մի այլ Մովսէսի մասին է խոսում հայր Պողոս Անանյանը՝ նշելով, որ նրանք, իր կարծիքով, թյուրիմացաբար նույնացվել են, և երկուսը համարվել են մեկ ու դրվել 5-րդ դարի գործիչների մեջ (տես Պ. Անանեան, Մովսէս Քերթողահայր եւ Մովսէս Խորենացի, «Բազմավէպ», 1991, թ. 1-2, էջ 7-25):

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 452:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Տես Մաղ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 556:

զգլխաւորդ Յայոց քահանայութեան»<sup>24</sup>: Իսկ անվճռական քահանայապետը ծայնում է. «Յո՞ գաս, չկամիմ, չիշխեն տեսանել»<sup>25</sup> քեզ: Այս դեպքում Մ. Օրմանյանի վարկածն ավելի է հավանական թվում: Եթէ կաթողիկոսն իր կողմնակիցների օգնությամբ կարողացել է զգետնել նրան որպէս եկեղեցական պաշտոնյա, ապա անպաշտպան է որպէս հոգևոր հովիվ, որ Աթոռի և Քրիստոսի արդարութունը չի պաշտպանում, թույլ է որպէս մտքի մարդ, անօգնական՝ իբրև հոգևոր հովիվ: Ենթատեքստում ակնարկների ձևով ասվածը հաստատում է, թէ որքան վտանգավոր վիճակում է գտնվում այս հալածյալը, որ, այլ ելք չունենալով, լքել է երկիրը, հայտնվել Ամիդում և այնտեղից միայն կարողացել գրել իր Թուղթը: Արդարամիտ և անկաշառ Ղազարը կաթողիկոսական Աթոռի համար պայքարում փաստացի տանուլ էր տվել, քանզի նույնիսկ չի էլ պատկերացրել այն խարդավանքները, որոնց զոհն է ինքն այժմ: Բայց այդ մասին նա գիտակցաբար լռում է: Լռում է, քանզի խոսելը կթուլացնի իր առանց այն էլ շատ թույլ դիրքերը, և իրեն մնում է ասել հաղթողների բարոյական արատների մասին: Այդ պարագայում է հասկանալի դառնում, թէ յուրայիններից («մերոնցից») Մովսեսը և նրա նման մի շարք լրջմիտ մտածողներ ինչու արժանացան չարամիտ արեղաների հալածանքներին և նույնիսկ զրկվեցին գերեզման ունենալու հնարավորությունից: Գուցէ այս դեպքում հասկանալի կդառնան նաև նրա Ողբի անձնական շարժառիթները: «Հառաչումն հիս ի ներքս ընթանայ և այսօր, և կամեցուցանէ բարբառել բան տիրական և սգաւոր: - գրում է պատմահայրը, - Եւ ոչ գիտեմ, եթէ զիարդ յարմարեցից զողբերգութիւնս, և կամ զո՛վ արտասուեցից»<sup>26</sup>: Ահա այն անելանելի վիճակը, որի մեջ հայտնվել է 5-րդ դարի հանճարը:

**Վերև - ներքև** այս հակադրությունն աստիճանաբար լուծվում է: Նամակագիրը գտնում է փաստեր, որոնցով դեռ պիտի առաջադրի հաշտության եզրեր: «Եւ եմ ես այն Ղազար, ըստ առ ի քէն տեսանէ և այլոց բազմաց ասացածի, որում ոչ ոք գոյ փոխանակ: Իսկ այժմ, - գրում է նա, - առ նախանձու աղետի, բազումք նկրտէին լինել իմ փոխանակ. բայց եթէ իցեն»<sup>27</sup>: Ճարտասանական տեսակետից հանգույցի լուծումը և «նոր» հանգույցի առաջադրումը վարպետորեն է կատարված: Չարախոս արեղաների և իր երկրորդ հակադրությամբ՝ նրանց մերկացումն ու ձաղկումն առավել խիստ են թղթագրի կողմից՝ ուժգին ու անզիջում: Գր. Խալաթյանցը գրում է. «Մանաւանդ հրաշանայ Ղազարեան գրիչն ի ձաղկելն յանխնայ զչարախօս արեղայից զչարութիւնն նախանձ առ կորովաբան ասողն»<sup>28</sup>: Ղազարը հիշում է Պիղատոսի օրինակը, որ եթէ նա ձեռքերը լվաց, ապա Վահանը չի կարող այդպէս վարվել, և դրանով նրան իր բուռն է հավաքում<sup>29</sup>: Մինչդեռ հույների մեջ քարոզիչների նկատմամբ սեր կա ու քաջալերություն՝ «իբրև գեղեցիկ իմն հակապատկեր նոցանց»: Եվ դրան հակառակ նկատում է. «Իսկ Յայոց արեղենքս առ դառնաշունչ նախանձու, որ

<sup>24</sup> Գր. Խալաթեանց, Ղազար Փարպեցի եւ գործք նորին, էջ 40:

<sup>25</sup> Ղազար Փարպեցի, Յայոց պատմություն: Թուղթ Վահան Մամիկոնյանին, էջ 476:

<sup>26</sup> Մովսես Խորենացի, Յայոց պատմություն, Եր., 1981, էջ 450:

<sup>27</sup> Ղազար Փարպեցի, Յայոց պատմություն: Թուղթ Վահան Մամիկոնյանին, էջ 452:

<sup>28</sup> Գր. Խալաթեանց, Ղազար Փարպեցի եւ գործք նորին, էջ 40-41:

<sup>29</sup> Տե՛ս Ա. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 63:

միացեալ է ի սիրտս նոցա՝ զնոցանց հակառակսն երկնեն .... աղօթս իսկ չառնեն ի վերայ ասողին.... Եւ դոքա նստին գլխարկեալք, պարարեալ երեսօք»<sup>30</sup>:

Եթէ զոհը միայն ինքը լինէր, դեռ ոչինչ, սակայն թշնամաբար և անհանգիստ հալածանքներով վախճանի հասցրեցին երանելի փիլիսոփա Մովսեսին, Խոսրովիկին, տէր Աբրահամ եպիսկոպոսին<sup>31</sup>: Այսպիսի բարքերը մեզանում սովորական էին դարձել: Մի՞թէ այդպիսի հալածանքներ չեղան Ս. Գրիգորի, Ներսեսի, Սահակի և «զայլոց բազմաց» դեմ նույն չար պարեգոտավորների ձեռքով և «ի դոցունց իսկ յերեսաց»: Նրանք նույնիսկ չհասցրեցին օրհնել՝ մեռնելուց առաջ: «Ոչ բացեալ ի բարեբան բերանս իւրեանց ի վերայ աշխարհիս այսորիկ՝ վախճանեցան»<sup>32</sup>, - գրում է Ղազարը դառնութեամբ:

**Մենք - այլք** հակադրությունը շատ լայն շառավիղ է ընդգրկում: «Մենք»-ի մեջ մտնում են Մովսեսը, Խոսրովիկը, տէր Աբրահամը, երեք ամենանշանավոր հայոց կաթողիկոսները և «այլք բազումք»:

Նախանձի և հալածանքների այլ օրինակներ է բերում նաև Հիսուսի և առաքյալների կյանքից: Այդպես վարվեցին հրեաները և նրանց օրենքներով շարժվող քահանաները. «Որոց չհանդուրժեալ դիւանով նախանձ՝ վիճակեցին մահու, և ոչ այլոց, այլ անիծից, իբրև չարագործ և մարդասպան»<sup>33</sup>: Այստեղ է, որ Ղազարն իրեն համեմատում է Հիսուսի և մարգարանին՝ Պիղատոսի հետ: Բայց եթէ Պիղատոսը կարող էր մի կողմ քաշվել, ինչպես նշվեց, ապա Վահանը դա անել չէր կարող<sup>34</sup>: Ավելին, Վահանը չէր կարող և չանսալ Ղազարին, քանի որ պարսից Վաղարշից նա արդարություն էր պահանջում, երբ ինքն էլ ծանր վիճակում էր գտնվում<sup>35</sup>: Նամակի միջնամասում խոսում է այն մեղքերի մասին, որոնց մեջ մեղադրել են հեղինակին: Առանձնացնում է վեց ամբաստանություն<sup>36</sup>: Դա ակնհայտորեն թվային միասնակալի տեսակետից խորհրդանշում է հենց մեղքի սկզբնապատճառ չար հրեշտակին ու նրա թվային խորհրդանշիչը<sup>37</sup>: Այստեղ արդեն Ղազարն ազատություն է տալիս իր լեզվին ու երևակայությանը: Նա հենց նամակի այս մասում է դրսևորում իր ճարտասանական հմտության ողջ փայլը, երբ նա դիմացիներին խստագույնս պարսավում է:

Չռետորաբար հարցնում է՝ ո՞վ այնպիսի բան կանցկացնի իր մտքով, թե Ղազարը պոռնկությունը մեղք չի համարում և դեռ այդ բանը մարգարանին էլ է համոզում: Ապացուցում է, որ դա սուտ է, չարամիտ պարեգոտավորների կեղծիքի ու նախանձի արդյունքը: «Եւ չիցե՞ն արդեօք արեղանս Հայոց արժանի ողբոց արտասուաց և բազում սգոյ»<sup>38</sup>, - գրում է Ղազարը: Խիստ քննադատելով ու մերկացնելով նրանց մեղքերը՝ զարմանում է, թե վերջիններս ինչպես չեն վախենում Աստծո դատաստանից, չեն ազդվում,

<sup>30</sup> **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն: Թուրք Վահան Մամիկոնյանին, էջ 478:

<sup>31</sup> Տեն նույն տեղը, էջ 484:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 484:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 456:

<sup>34</sup> Տեն **Ա. Ալեքսանյան**, Հայ միջնադարյան նամակը (4-14 դդ.), էջ 63:

<sup>35</sup> Տեն նույն տեղը, էջ 64:

<sup>36</sup> Տեն **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Գ, էջ 348-349:

<sup>37</sup> Տեն **Ա. Աբրահամյան**, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Եր., 1944, էջ 237:

<sup>38</sup> **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն: Թուրք Վահան Մամիկոնյանին, էջ 456:

երբ ամեն օր Գրքերում մշտապես կարդում են նույն մեղքերի ու անհրաժեշտ զոջումի մասին:

Մերժում է աղանդավոր լինելու մեղադրանքը, որի համեմատ պոռնկացածների մեղքերը թեթև ու չնչին պիտի համարվեն: Բերում է Սուրբ հայրերի գրվածքները, որոնք իրենց ձեռքի տակ ունեցել են Արիոսի, Ապոլինարիոս Լավողիկացու, Նեստորիոսի, Եվտիքեսի և այլոց գրվածքները: Սրանք եկեղեցուց մերժվեցին, բայց և ուղղափառ ժողովուրդները նրանց մասին գիտեն: Ինքն էլ է ճանաչել մի աղանդավորի, բայց նրան չի դատել ըստ նրա մասին լսածների և նրա համախոհը չէ նաև, ինչպես չարախոսները փորձում են ներկայացնել: Ուզում է ասել, որ անգամ ամենամեղսագործ մարդու մասին չի կարելի խոսել առանց փաստերի: Թեպետ ինքն էլ վարդապետ է, բայց երբեք մերձավորների ու մտերիմների կողմից չի արժանացել գովեստների: Հայոց ուսուցիչներն իրեն երբևէ չբարձրացրին և չդարձրին եպիսկոպոս, անգամ՝ քորեպիսկոպոս, էլ ուր մնաց ինքն իրեն առաջադրել որևէ պաշտոնի, քանի որ իրեն համատարած ատում են: Ինքը չի կարողանում հասկանալ դրա պատճառը: Եթե փնտվում են վատին, ինչու ապա չեն գովում լավին: Դառնացած խոսում է մի կողմից իր՝ պաշտոնների չձգտելու, մյուս կողմից ազնիվ հոգևորականության կողմից անհրաժեշտ աջակցություն չստանալու ցավալի փաստի մասին: Անգամ չի հանդգնել վարդապետական աստիճան հայցելու համար ներկայացնել իրեն:

Պատմիչն ապացուցում է, որ չի ընկերացել պիղծ մարդկանց հետ և չի հովանավորել նրանց: Իր նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքը նաև վանքի միջոցներին տիրանալու համար է եղել: Ինքն ազնվորեն է ամբարել ամեն ինչ Էջմիածնի կաթողիկեի համար, և այդ մասին կան նաև կազմված ցուցակներ, ու կարող է վկայել և Ակիթ Գարդմանացին՝ նկատի ունենալով վանքի նյութական առաջընթացը շինության հիմքը դնելուց մինչև իր հեռանալը: Ինքը գրեթե ոչինչ չի ծախսել իր հայթայթած միջոցներից, իսկ իր ունեցվածքը՝ հատկապես հունարեն գրքերը, հափշտակվել են: Ցավ չի զգա, եթե զոնե դրանցով լուսավորվեն, բայց կլուսավորվեն՝ արդյոք, թե՞ ուտիճների կեր կդարձնեն դրանք: Չարամիտներին հաջողվել է զցել իրեն մարգպանի աչքից: Մեղավոր է, որ ժամանակին չի զգուշացել լարված որոգայթից (հիշեցնում է Վահանին Սևուկի դրախտում նրա իսկ հնչեցրած խոսքը)<sup>39</sup>: Այս անգամ շեշտում է մի այլ հակադրություն, այն, որ երկրային գործերում «տկարամիտ եւ անզգուշացող այր» է ինքը: Ու թեև իրականում նա երկնային գործերի մարդ է, երկրայինի մեջ՝ «տկարամիտ», բայց նրա խոնարհ պահվածքը, ժուժկալ ապրելակերպը և վանքի ունեցվածքը բազմապատկելը հակառակն են ապացուցում: Նա իր օրինակով սովորեցնում է մյուսներին աստվածային օրենքներով շարժվել: Ապացուցում է նաև, որ երկրի վրա ևս կարելի է երկնայինին ձգտել և հասնել:

Հենց այդ ժամանակ ինքը պետք է հեռանար, քանի որ հակառակորդներն իրենց հարստությամբ գնեցին բազում **հեսաններ և սրեցին իրենց**

---

<sup>39</sup> Ցավոք, միայն նամակագրին ու իր հասցեատիրոջն է հայտնի նրանց զրույցի բովանդակությունը: Երևի դա եղել է զրույց- պարզաբանում դարձյալ չարամիտ արեղաների նյութական չարաշահումների փաստացի ապացուցումների շուրջ, և **Սևուկի դրախտ**-ն էլ մերձակա վանական միաբանություններից մեկն է, ուր ևս նման բաներ են տեղի ունեցել, ու այդ ամենին միջամտել է մարգպանը:

**լեզուներն իբրև սուսեր:** Այն դեպքում, երբ ինքն իր ունեցած ամեն ինչն ամբարել է վանքի և հասարակաց բարօրության համար, հակառակորդներն իրենց հափշտակածով կաշառել են շատերին ու իր դեմ հանել: Որքան էլ իրողությունը ողբերգական է, ինքն ուրախ է, սակայն, քանի որ փորձություններից իր հոգին զորացել է: Չի կարող չհիշել նաև կաթողիկոսի մերժումը. «Ո՛ւր հոգողութիւն արդար ուսուցչի. ո՞ւր քրիստոսանմանութիւն առողջ հայրապետի», - հարցնում է թղթագիրը: Սա կարծես ականարկ է այն մասին, որ հալածանքներն այնտեղից են նյութվում և խրախուսվում: Խոսե՞ց արդյոք հովվապետն իր հետ «որպէս հրամայէ Փրկիչն», երբ ինքը հայտնեց, թե «**Հաս յօգնել. ....կարեվէր են մերձ ի մահ. քեզ է այսուհետև հարկ՝ դնել դեղ և բժշկել**»: «Եւ նորա պատասխանի արարեալ ասաց. «**Ես և տեսանել իսկ չիշխեմ զքեզ առ ի երկիւղի. դու ասես, եթէ գամ՝ բժշկեմ, և կամ թաղեա. մի՛ գուցէ զգացեալ ուրուք՝ և զիս ընդ քեզ թաղիցէ**»»<sup>40</sup> (ընդգծումը մերն է - Ս. Ս.): Ի՞նչ օգնության մասին կարող է խոսք լինել, երբ հովվապետը վախենում է ինքն էլ թաղվել օգնություն խնդրողի հետ: Աստվածաբանության ու ճարտասանության մեջ հմուտ Ղազարն անմիջապես բերում է Հիսուսի օրինակը, որ նեղյալներին իր հովանավորության տակ էր առնում, իսկ Պողոս առաքյալը հոգևորականներին հորդորում է հանցանք գործողներին հետ պահել հանցագործությունից: Այսինքն՝ միջամտել արտակարգ իրավիճակներում հայտնված մարդկանց կյանքին և օգնել՝ այդ վիճակից դուրս գալու: Իսկ իրեն ընդունելու և իրերի մեջ խորամուխ լինելու փոխարեն կաթողիկոսը սարսափահար մերժում է ու Աստծո հակառակն աղաղակում. «Յո՞ գաս, չկամիմ, չիշխեմ տեսնել»<sup>41</sup>: Ինչո՞ւ մեկ-երկու անգամ չտարավ իր սենյակը և չխոսեց իր ենթակայի հետ, որպեսզի չհավանելու դեպքում էլ իբրև մեղավորի հալածեր: Սա, ըստ Ղազարի, արդեն ոչ քրիստոնեական, անսկզբունք պահվածքի, քան ուղղակի վախի դրսևորում է և կրոնական իմաստով անընդունելի: Հակադրության ընդգրկման շրջանակն ընդլայնվում է: Մեջտեղ է գալիս արդարության ու սրբազանի պաշտպանության, ինչպես և չարի ու անկատարի անընդունելիության կամ մերժման հարցը: Մեթոդի առումով դա նույն հակադրության սկզբունքի ևս մեկ ուշագրավ դրսևորում է:

Մի անգամ ավագ մարդկանցից մեկն ավստոսանք է հայտնել, որ եկեղեցու զարդը լինելով՝ Ղազարն անտեղի է հեռացվել, իսկ պարեգոտավորները չքմեղացել են՝ պնդելով, թե նա այժմ այլևս լավ չի քարոզում: Այդ անհեթեթությանը պատասխանելով՝ նա բերում է երեմիա մարգարեի խոսքերը. «Եւ թող նստեալ լայի զթշուառութիւն աշխարհիս»<sup>42</sup>: Պատահական չէ նաև խաչված ավագակի խոսքի վկայակոչումը, թե իրենք իրենց հանցանքի համար են պատժվել, իսկ Հիսուսը՝ ինչի. «Իսկ սա ընդէ՞ր»: Այսինքն թե՛ ինքը ևս չգիտի՝ ինչո՞ւ, և ո՞րն է այժմ իր մեղքը: Ու ինչո՞ւ իրենց ողբերգական ավարտը հալածանքների մեջ գտան նաև մեր ժողովրդի առաքելանման շատ այրեր. «Եւ եւս առաւել քան զսոյնս դիպեալք ի յաշխարհիս ի յայսմ՝ խստագոյնս վշտիւ վախճանեցան»<sup>43</sup>: Երանելի փիլիսո-

<sup>40</sup> **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն: Թուրք Վահան Մամիկոնյանին, էջ 474:

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 476:

<sup>42</sup> **Երեմ.**, Թ 1:

<sup>43</sup> **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն: Թուրք Վահան Մամիկոնյանին, էջ 482:



փա Մովսեսն արդեն կենդանության օրոք երկնային «զօրացն էր քաղաքակից»: Նրա տգիտահալած գրքերը «**առ անգիտութեան փաթաղ ի կէս կոչէին. և այլ բազում ինչ իրօք թշնամանեալ՝ յետոյ ապա յաղագս այլոց ամօթոյ՝ զխաբէական զեպիսկոպոսութիւնս նման դեղոց մահու արբուցեալ սրբոյն՝ հեղծուցին: Որոյ ի ժամ վախճանին զինչպիսի ահաւոր նգովս գրով ի վերայ գլխաւորաց քահանայութեանդ ասացեալ է՝ ձեզէն իսկ գիտէք տեղեկացեալք**»<sup>44</sup> (ընդգծումը մերն է - Ս. Մ.): Իր ողջ կյանքում սուրբը մաքառեց հայոց աշխարհի բարձրացման համար, բայց տգետները «Չոսկերսն ի գերեզմանէն հանել տային և ի գետ արկանել, ...և այժմ դեռ ևս անյագութեամբ քինով մեռելոյն կազին»<sup>45</sup>: Երանելի թարգմանիչների դեմ այս մահացու արշավանքներից մեկն էլ ավարտվում է տեր Խոսրովիկի անժամանակյա մահով: Ճարտասան թղթագիրը հանդիպադրում է կաթողիկոսին հղած իր նամակը և Խոսրովիկի հայրենիք վերադառնալու առթիվ հնչած ցավալի հալածական խոսքերը՝ թե «Ահա ո՞ւր գայ միւս ևս թարգմանն» («այս մյուս թարգմանիչն ո՞ւր է գալիս»): Շղթան լիարժեքորեն փակվում է: Պայքարը փաստորեն ուղղված է լուսավորյալ մտավորականության մի ողջ խմբի դեմ, ովքեր հունական ճաշակի տեր հոգևորականներ էին: Հիշելով նախկինում հալածվածներին ու մահվամբ հատուցածներին՝ շեշտում է, որ իր խոսքն ուղղված է բոլոր եղբայրասպանների դեմ, որոնք փարիսեցիների պես «նոյնպիսի գործոց լինին նմանողք»<sup>46</sup>: Իհարկե, այս բանավեճը չի վերաբերում հայ հոգևորականության այն մասին, որն իր ազնիվ գործն է կատարել: Միշտ էլ գտնվել են այնպիսիք, որ աչքի են ընկել իրենց ծայրահեղություններով:

Թուղթը մի եզակի գրական հուշարձան է՝ գրված «նամակի և ճառի, քարոզի և ներբողի»<sup>47</sup> տարրերի ներառմամբ: Այն դատավարական-ինքնապաշտպանական խոսքի մի տեսակ է, որ կարելի է անվանել «դատական-ապացուցական ճառ»<sup>48</sup>: Նրա թղթագրական - կառուցվածքային խնդիրներին չանդարդառնալով՝ նշենք, որ այն իսկապես պահպանում է մի կողմից միջնադարյան նամակին բնորոշ կառուցվածքային բոլոր տարրերը, մյուս կողմից՝ դրանք լրացնում ժամանակի ճարտասանության ձեռքբերումներով՝ կապված նաև «Պիտոյից գրքի» դիտողությունների, կապված թղթի ու նրա ճարտասանական հորինվածքի առանձնահատկությունների հետ<sup>49</sup>: Պետք է ասել, որ ճարտասանական այն միջոցների մի մասը, որ գերակշռում են Թղթում, քաղված են «Պիտոյից գրքի» հատկապես «Յաղագս պարսաւի» 6-րդ գլխի սահմանումներից: Թեև Ղազարը ճարտասանական արվեստի մեծ գիտակ է և ծանոթ է շատ ճարտասանների երկերի ու հաճախ է օգտվում նրանցից, բայց համակողմանիորեն օգտագործել է նաև հիշյալ աշխատությունը<sup>50</sup>: Ղազար Փարպեցին կարևորել

<sup>44</sup> Նույն տեղում:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 484:

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 486:

<sup>47</sup> Ա. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 58:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 59:

<sup>49</sup> Տես նույն տեղը:

<sup>50</sup> Այդ երկի հեղինակ է համարվում հույն իմաստասեր Ափթնիոսը (մ. թ. 4-րդ դ.), սակայն հայկական միջավայրում այն ուղղակիորեն «հայացվել» է՝ ենթարկվելով մեծ փոփոխությունների (տես Յ. Հովհաննիսյան, Ողբերգության ըմբռնումը Թրակացու հայ մեկնություններում, «Բանբեր Մատենադարանի», 1971, թ. 10, էջ 22):

է նաև եղծման կամ այդ գրքի 3-րդ գլխի կարևոր սկզբունքները: Այնտեղ ասվում է, որ պետք է մերժել այն, ինչը այնքան էլ իրական չէ, ոչ էլ անհնարին է, այլ ունի միջին բարդություն: Դա պետք է կատարել՝ տալով առարկայի մասին համառոտ տեղեկություններ, պարզաբանել առարկայի կամ թեմայի էությունը՝ շեշտելով եղելության ոչ հավաստի լինելը<sup>51</sup>, ինչը պահպանված է թղթագրի կողմից: Գրված է, թե պարսավը պետք է երկի սկզբում անել, «որպես ի ներբողեանս, ... եւ ապա զգործսն դնել, եւ զբաղդատութիւնն, եւ զի վերայ բանին պատճառին ձայնակցել»<sup>52</sup>: Հակադրության պարսավական ձևը, որ գովեստի հակառակն է, ինքնին մի հակադրություն է՝ այդ մեթոդի գործադրմամբ:

Թղթագրության մեջ կյանքը համակողմանիորեն պատկերելու, իր բուն նպատակադրմանը հասնելու, հասցատիրոջը համոզելու իր ճշմարտացիության մեջ ու իր կողմը գրավելու համար Փարպեցին հանդես է գալիս իբրև վարպետ թղթագիր-ճարտասան: Նրան հաջողվում է հասնել լուրջ ձեռքբերումների և վերականգնել իր ոտնահարված իրավունքները: Մեթոդական առումով նա կատարում է հակադրության լայն կիրառություն, որը տեսականորեն ընդունված է շատ փիլիսոփաների ու գեղագետների կողմից<sup>53</sup>: Այդ ամենի հետ մեկտեղ՝ թղթագիրը գործադրում է գրողական հնարքներ, որոնք բխում են ընդհանուր և ազգային արքեստիպերից.

1. Վերև-ներքև ուղղահայացում ավանդական հակադրությունը տարածվում է Աստված-մարդ, տեր-ծառա, սրբազան-հասարակ հարաբերությունների ոլորտում,

2. Մենք-ուրիշներ հորիզոնականը հանդես է գալիս որպես արդարության և կեղծիքի հակադրության նոր դրսևորում,

3. Կատարյալի ու անկատարի հակադրությունը վերածվում է բարու - չարի հակադրության:

**САРГИС МХИТАРЯН – Особенности метода в посланиях Лазара Парпеци.** – Статья посвящена проблеме метода у Лазара Парпеци, в частности, особенностям его применения в послании «Обвинение лживых монахов». Произведение анализируется с помощью структурного метода, который позволяет раскрыть в структурных особенностях послания определённые художественные элементы. Дело в том, что в сравнительно-историческом и описательном отношении оно было подробно исследовано И. Эмином, М. Налбандяном, М. Орманяном и др.

Не всё в «Обвинении лживых монахов» выражено на вербальном уровне, многое остаётся в подтексте, хотя и фигурирует в виде намёков и реминисценций. Автор выявляет две сферы бытия – сакральную и профанную. При сопоставлении небесного и земного божественное противопоставляется человеческому. Это делается с целью удостоверить, что правитель (марзпан) Ваан Мамиконян – носитель божественной справедливости, а сам Лазар – заурядная личность. Противопоставление здесь носит преувеличенный характер и должно показать, что противники Ваана нарушили законы божественной справедливости, следовательно,

<sup>51</sup> Տե՛ս «Գիրք Պիտոյից» (աշխ. Գոհար Սուրադյանի), Եր., 1993, էջ 60:

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 124 (գլուխը՝ էջ 124-152):

<sup>53</sup> Տե՛ս **Аристотель.** Мир философии. Книга для чтения. Т. 1., М., 1991, էջ 363:

обвинение его в ереси ложно. Лазар называет и другие жертвы злоумышленников. Среди них философ Мовсес, епископ Абраам, переводчик Хосровик и даже святые Нерсес и Саак; клеветники преждевременно свели их в могилу. Выявляя ложь, Лазар очищает искажённый мир и оправдывает себя. В этом послании, первом в армянской литературе эпистолярном сочинении, мастерски сплетены качества, свойственные разным жанрам.

**SARGIS MKHITARYAN – *The Methodical Peculiarities of Ghazar Parpetsi's Epistle.*** – The article is devoted to the problem of method and in this case to the revelation of the methodical peculiarities in Ghazar Parpetsi's epistle mentioned above. In the article we've tried to study the epistle by using the structural method. Our aim is to find out some artistic elements in the structural peculiarities as M. Emin, M. Nalbandyan, M. Ormanyan and others have studied it earlier in detail by the diachronic and descriptive methods. These scientists mention that the epistle is written about 488-491.

Not everything is introduced verbally in the text. Many things are left out but generally included in the context in the form of comparisons and recollections. The author has proposed two sides of life: sacred and preposterous. The celestial and terrestrial spheres are juxtaposed by identifying the contrast and connection of the divine and human worlds. The governor /marzpan/ is from the celestial sphere and the author is from the terrestrial one. The division is done in order to confirm that Vahan Mamikonyan is the bearer of the divine justice and he is someone insignificant. The contrast is exaggerated here to show that the author has been put in such a situation as the divine laws of justice have been broken. He has endeavored in Syuniq for two years, accompanied Movses the Philosopher to disengage from the disorder. Nerseh and Hrahat Kamsarakans, the bishop of Syuniq Mushe' can witness about his pure behaviour. Therefore the accusation of belonging to a sect is defamation. Then he has posed some facts that approve it. His Holiness who is from the celestial sphere cannot defend the divine laws and because of the forgers he has misunderstood everything and even fears to meet Ghazar or to speak to him. That's why Parpetsi mentions the names of their victims who died earlier because of them: Movses the Philosopher, bishop Abraham, Khosrovik the Translator and even St. Nerses and Sahak.

From that moment Parpetsi had tried to restore justice, to expose the chouse and greed of the sneaks. The misrepresented world was cleansed. After this the author exculpated his person /denied the 6 sins/. Ghazar Parpetsi's subtle knowledge of the rhetorical art is shown here. He managed to recreate the sacred images of Vahan Mamikonyan and other representatives of that period. He didn't forget about himself as a well-known historian and author of the epistle, too. Here different genre elements are skillfully combined and in this way the first work of epistolary genre was created in Armenian literature.